Մարտիրոս Թօքատեանի՝ նախաձեռն ճարտարութիւն-ներով։

Դժբաղդաբար ամուրի ծերութեամբ մը զրաւեց իր կեանքը՝ կտակելով իր ունեցածն (150000 լիրայի չափ) ու գործերը քոյրերուն եղբայրներուն և քեռորդիներուն, որոց հայրագիրն ալ եղած էր իր երէց քրոջն հետ։ Իր մարմինը փառաւոր յուղարկով Անգղիայէն փոխադրուեցաւ և թաղուեցաւ Կ. Պոլիս։

Կարծենք՝ բարեհամբաւ Յակոբեանց մէկ եղբայրն ալ նախագործած է իրրեւ դրագիր Պէշիքթաշլեանց քով, և ապա երկու եղբարք՝ Միքայէլ և Յովհաննէս՝ երկար աշխատութեամբ և մանրավաճառութեամբ՝ յաջողած են հիմը դնել այն բարի ու փառաւոր առևտրական տունին, որ կը շարունակէ ցարդ իրենց որդւոց ձեռքով։ Յակոբեան Միքայէլ՝ կրսեն՝ Կ. Պոլիսի հրապարակին վրայ գործի արձի՛ւ մըն էր և Յովհաննէս Յակոբեան՝ Մանչէսդրի հրապարակին վրայ և առտնին կենցաղի մէջ՝ սո՛ւրբ մը. անշուշտ այս բարեմասնութիւնք պատճառ եղան իրենց տեւական մեծութեան և հզօր անունին...։

Ըստ այսմ՝ մինչեւ 1860 Կ. Պոլիսի և անոր միջոցով, Պրուսայի, Զմիւռնայի, Ադրիանուպոլիսի, Նիկոմիդիայի ու Կեսարիայի հրապարակներուն վրայ կազմուած էին տասնեակ մը մանիֆաթուրայի վաճառական հայ տուներ՝ մինչ յոյներն (1) ալ հետզհետէ տեղի կուտային մանիֆաթուրայի՝ մանաւանդ պասմայի ու ամերիգանի՝ հրապարակէն, ամփոփուելով աւելի՛ հաստատուն, աւելի՛ կոկիկ սեղանաւորական և արմատիքի գոր-

(1) Կ. Պոլիսի Յոյնք այն ատեն ալ՝ ինչպէս հիմայ՝ հարստութեանց ընդարձակ գործառնութեանց և բարեգործութեանց կողմէն չէին հասներ Միջերկրականի ու Եգէական կղզիներուն և Եգիպտոսի մե՛ծ յոյներուն կարողութեան։